

Համարինք վրանին զբախտական մը հրա-
տարակելու, այսու չենք մոռնար ըսելու որ
ատենը թէեւ փոքր երկեր են, բայց ըստ նիւ-
թոց՝ մին մոլովեանց խարազան, այլք հե-
տաքերբական են թատերական և գիտական
տեսակետով:

Իսկ 6. 8. 9. թուակիր երկերուն վրայ
առաջիկայ Քաղմավեպով կը խօսինք:

3. Ինչ է կարդում ժողովուրդը. Ս. Ա. —
Տպարան Տ. Մ. Ռոտինեանցի. Թիֆլիս
1899:

4. Մանչերու թշնամին. Յովսէփ Տ. Ստե-
փանեան. — Տպագր. Յ. Մատթէոսեան.
1899. գին 5 դահեկան:

5. FOETUS MONSTRUEUX HUMAIN. D.^r A.
Carachache. Paris M. le Docteur Demlin
49, Rue de Rome, 49.

6. Ալեւիա. գրեց Յ. Գ. Մըրմըրեան.
իննեակ իմաստասիրական — Անուշ, Բովան-
դակը, Հաստատութիւնը, Մաւհը, Աստուած,
Հանճար, Գեղեցիկը, Սէրն և Աստղերուն
խօսքը: — Կ. Պօլիս, Տպգր. Յ. Մատթէոսեան.
1900. Գինը 5 դր:

7. — Օսկան Պետրովիչն էն կիրումը. կա-
տակերգութեան մէկ արարուածով. աւելցրած
նոր տեսիլներով, խօսակցութիւններով և
մենախօսութիւններով: Գաբրիէլ Մունդու-
կեանց: Թիֆլիս, տպ. Մարտիրոսեանցի.
1899. Գինն է 30 կոպեկ:

8. — Բանաստեղծութիւններ. Յակոբ Յա-
կոբեան: 1899 Թիֆլիս. Կենտրոնական գրա-
վաճառանոց: Գինն է 30 կոպեկ:

9. Գիրք Մնացորդաց, ըստ հնագոյն Հայ
թարգմանութեան: Չառաշինն ած ի լոյս
ըստ կրկին ձեռագիր օրինակաց, Հանդերձ
Բ. լուսագիր նմանատպութեամբը նոցին,
Գրիգոր Խաչաքեանց: Մոսկուա. Տպարան
Վարվադը Գառցուկ. Ռեթիւ — 1899:

ՊԱՐՏԻԶՊԱՆՈՒԹԻՒՆ. գրեց Հ.
Մանուէլ Վ. Քաղունի ի Միլիթարեան
ուխտէն: — Վենետիկ, Ս. Ղազար: 1899,
312 էջ, գին՝ 1.50 ֆր.:

ԱՐՄԵՆԻԱ ԱՆՈՒԱՆ ՍՏՈՒԳՐԱԾԱՌՈՒ

ԹԻՒՆԵ ՆԻ ՀԱՅ ԱԶԳԻՆ ԵՄԿՈՒԹՄԵՆ

Վերջին տարիներում՝ մեր ազգիմ ծագումը
և ԱՐՄԵՆԻԱ անուամ ստուգարանութիւնը խուզ-
արկող քամատեղներու ցամակն մէջ՝ պէտք չէ մոռ-
նալ յիշելու մասն Կ. Ա. ղէ Կարա Ռմուտ յիսուծա-
մը, որ տարիներէ ի վեր Civiltà Cattolica գիտա-
կամ թերթիմ մէջ՝ Պեղասպահանց և իրենց գաղթա-
կամութեանց վրայ Ռմուտից յօդուածներ գրելով,
ամենց շարքիմ մէջ առանձին գլուխ մի կը բանայ
« Degli Hittim o Hethei e delle loro migrazioni »
պիմնագրով, յորում մեզի համար հետա-
քըրքրական և շահեկամ ինքնորոշում կը զբաղի:
Կը սկսի հատուածն՝ մեր աշխարհիմ մախկիմ
սանմամները որոշելով, որում համար մէջ կը բերէ
համաուսուի հիմ օտար պատմաց և աշխարհա-
գրաց կարծիքները, որոնք սակայմ շատ կը տար-
բերիմ իրարմ, ումանք չափեմ աւելի ըզգարնա-
կելով և ումանք չափազանց ամփոփելով զանոնք:
Այդ խմբիմ և անոր մասիմ այլեւայլ կարծիքներմ
արդէն ամենուիմ ծանօթ ըլլալով իմենիմանի ՀԱՅ-
ԽՈՍՏԻՔԻՆԵՐԵՐԸ, և իրկորոշաբար միայմ կարեւո-
րութիւն ունենալով մեր առաջարկեայ միւթոյմ,
աւելորդ կը համարիմք Ռոս մամրամասմ մէջ ըն-
րել: Զօդուածագիրմ շատ հմուտ կ'երեւի իւր մա-
ուս միւթոյմ, ինչպէս յայտնի է իրեն ուրիշ հա-
տուածներմ, հմուտ ի մասնաւորի հիմ պատմու-
թեանց: Զամախ ենթադրութեանց կը ղնտէ, զո-
րումք հաստատելու համար պատրաստ ունի միշտ
աղբիւրներ, փաստներ, որոնք սակայմ երբեմն Դա-
մոգել ըլլալէ հետո են: Իրեն ըլլող կարծիքները՝
միւր ազգիմ հմութեան և անոր կատարած գերակշիւ
ղերի մասիմ՝ թերեւս ամէմ հայ բանասիրաց ամ-
գամ ըմբռնելի չըլլամ: և սակայմ ազգայիմ մը
չէ՝ որ առանց յաջ կամ յախենի մայիլու՝ պաշտպա-
մէ զամոնք, այլ օտարագրի մէջ՝ ճշմարտութիւնը
սիայմ իրեն Ոպատակ դրած: Ներկայ յօդուածը՝
ոչ բաւ առ բաւ՝ այլ քաղուածոյ թարգմանութիւն
մէջ, յորմէ դուրս թողուած են այմ ըլլող կէտերը՝
որոնք կամ շատ ծանօթ են և կամ մեր միւթոյմ
հետ ամենուկ կապ ուր չունեն:

Հ. ՅԱՎՀ. ԹՈՐՈՍԵԱՆ

1. Civiltà cattolica, Serie XV, vol. IX.

2. Հա. Ա. Դիրք և տարածութիւն, և այլն.
յէջ. 27-38:

Արմէնիա անուան ստուգաբանական նշանակութիւնը զեռ ծանօթ չէ, և բազմաթիւ առաջարկեալ մեկնութիւնք տակաւին խնդրոյ և վիճարանութեան նիւթ են, ինչպէս անոնք՝ որ հաւանականին կամ ճշմարտանմանին սահմանաց մէջ կը մնան : Դիւարութիւնն անտի կը ծագի՝ որ չի գիտցուի թէ լեզուաց 'ը ցեղին մէջ պէտք է փնտռել սոյն անուան արմատական տարբերքը : Անոնք որ սեմական ծագումէ յառաջ եկած կը համարին զայն, ինչպէս Բոշար¹ և այլք, կը տեսնեն զԱրմէնիա՝ եբրայական օրօր, անուան մէջ, յորում օրօր, Միհի կամ Միհի, որ՝ ըստ փինցիի² կը համապատասխանէ Յովսեպոսի³ Μινυά-ին, միացեր է առաջին վանկին հետ Երա, Արարատայ, որ ասորեստանեայ արձանագրութեանց Ուրարտուն է : Երեմիայի (ԽԱ, 27) քաղկացի թարգմանիչն՝ փոխանակ օրօր, Արարատ միհիի՝ կը գնէ օրօր, Հարմի, որպէս թէ ըսէր՝ Լեւան Միհի, յորմէ Արմէնիա : Իսկ այլք, որոնք արիական անուն մը կը համարին զայն, անոր ծագումը Anramainyu-է՝ կը գնեն, զոր կ'ընդունի Փինցի⁴, եթէ համեմատաբար աւելի նորագոյն ժամանակներու վերաբերի այն :

Լանգլուա, Խորենացոյ հայ նահապետաց ծննդաբանական ցանկը մէջ բերելով, կը դիտէ որ Հայկայ սերնդոց մէջ Արմենակ, Արմայիս, Հարմա և Արամ անուններն՝ բուն լուրն ալ արմատական արմ մասնիկն ունին, թէ և այսու չի համարձակիր նա որոշակի հաստատել՝ թէ անոնց կազմութեան և կամ արմէն անուան հետ ո՛ր և է առնչութիւն ունեայ այդ արմ բառն⁵ :

Միւս կողմանէ բացայայտ է ամենուն, թէ գասական աւանդութիւնն Արմէնիա կո-

չումը կ'ընծայէ հոռոցի կամ Թեսաղացի Արմենոսի, ինչպէս կը գտնենք յիշատակած առ Ստեփանոսի Բիւզանդացոյ, որ Անտիպատրոսի վկայութիւնը մէջ կը բերէ, թէ « Արմէնիա, աշխարհ մերձ առ Պարսս, (կոչեցաւ) յԱրմենոսէ հոռոցոյ, որպէս (ունի) Անտիպատրոս յերրորդ գիրս Յաղագս Հառդոսի⁷ » : Ստրաբոն⁸ այլ Արմենոսը Թեսաղացի կը կոչէ՝ Արմէնոս քաղաքէն, Յասնիի գէպ ի Կողքիս ըրած արշաւանաց բնիկ, որուն անուամբ կ'աւանդէ Արմէնիա կոչուած մեր աշխարհը⁹ : Սոյն կարծեաց անհիմն ըլլալը պիտի ցուցուի փոքր ինչ յետոյ, երբ հաստատենք թէ հոռոցի կամ Թեսաղացի Արմենոսի գոյութենէն շատ յառաջ կար տեղացի բնիկ ժողովուրդն, Մինիացիք կամ Մաննացիք կոչուած, որ Հայոց նախնական անունն էր :

Այդ, Արմէնիա անուան այս զանազան ստուգաբանական ծագումներէն ո՞րը արդեօք կրնայ ճշմարիտ համարուիլ կամ գէթ աւելի հաւանական :

Նախ և առաջ բոլորովին անընդունելի է սեմական ստուգաբանութիւնն, քանի որ Արմէնիա՝ սեմական ծագումն ունեցող ժողովուրդի կամ երկրի անուն չէ : Նշոյալէս պէտք է ծիտել նաեւ Anramainyu-է կազմուած ըլլալու կարծիքը, քանի որ Anro Mainyus աւերիչ և սպանող ոգին է Անեստայի կրօնքին մէջ, հետեւաբար համեմատութեամբ աւելի յետին ժամանակաց կը պատկանի այն, մինչդեռ Արմէնիա անունն արդէն իսկ գոյութիւն ունէր Հերոդոտոսի և Քսենոփոնի ժամանակները⁹ :

Սեմական և արիական ստուգաբանութիւնները հերքելով, հարկ է ուրիշ մի գտնել՝ որ ոչ սեմական և ոչ արիական լեզուին պատ-

1. Bochart, *Phaleg.* I, 3. էջ 20.
2. Finzi, *Ricerche*, Lib. I, P. I, Sez. II, էջ 342 :
3. Flav. Jos. *Ant.* I, 3, 6:
4. Lagarde, *Gesamm. Abhandl.* էջ 169. Pott. *Etyml. Forschung.* II, Th. III, Abth. էջ 76 :
5. Finzi, առ, էջ 342 :
6. Langlois, *Mar Apas Catina*, « Histoire

ancienne de l'Arménie ». Դ. (պ. Ժ), Ժառ. 6. Կ. Ե, *Fragm. Hist. Graec.* Mueller.
7. Ἀρμε.ia, χώρα πληστον τῶν Περσῶν, ἀπὸ Ἀρμένου Ῥόδου, ὡς Ἀντίπατρος ἐν τρίτῳ Περὶ Ῥόδου. Steph. B. *Gentilia*, և այլ. Lugd. Batav. 1694. էջ 169 :
8. Καὶ δὲ καὶ τὴν Ἀρμενίαν ἐπώνυμον καταλαβειν. Strab. XI, IV, 8.
9. De Harlez, *Avesta*. Introd. էջ IX, և այլ :

կանի. որովհետեւ նախապատմական ժամանակի Հայերն, ինչպէս կը նկատենք մենք հոս զիրենք, ոչ սեմական և ոչ ալ արիական ցեղի կը պատկանէին, այլ այն բազմաթիւ աշխարհակալ ժողովուրդներէ մին էին, որոնք զանազան անուանց ներքեւ, ինչպէս էին Ալեքատացիք, Սումերացիք, Ելամացիք, Շոշացիք, Ամարդացիք, Մարե, Գուշիւրք կամ Գուշացիք, Եթովպացիք, Հետացիք կամ Բետացիք, սեպաձեւ և սրբատառ կամ մեհնադրոշմ գրութեանց հետ՝ արուեստից և քաղաքականութեան առաջին սերմերը տարին ի Բաբելոն և ի Փաղղեստտան, Տիգրիսի արեւելահողմը և Եփրատի արեւմտահողմը գտնուած երկիրները, Կասպից և Եւքսինեան ծովերուն եկերբները, ի փոքր Ասիա և Հայաստանի Արարիկ և մինչեւ յԵգիպտոս, երբ պատմական ժամանակաց արշալոյսն ծագեցաւ: Մենք խամիս անուամբ կը կոչենք այդ բոլոր ազգերը, որոցմէ ոմանք յետագայ ժամանակաց մէջ արիականք պիտի կոչուին, որովհետեւ արիական ցեղին պատկանող ժողովուրդներ եկան անոնց երկիրները բնակեցան, բերելով այնտեղ իրենց լեզուները, և այնպէս միացան և խառնուեցան բնիկ ժողովրդաց հետ, որով գրեթէ անհետացաւ անոց ծագման տարբերութիւնն:

Արդ Հայերն ալ, կամ լաւ եւս՝ նախահայերն ալ, խամիս կոչուած ազգերէն մին էին և մերձաւորք Հետացոց, որոնց հետ բարեկամութեան և զաշնակցութեան կապեր ունեցան: Հայաստանի ժողովուրդներէ մին, որ աւելի ծանօթ է հին ազգաց պատմութեանց մէջ՝ իբր զօրաւոր և պատերազմաւոր ազգ, եղան Մինիացիք կամ Մաննացիք (Man-na-ai, Ma-an-an-ai), որոնք կը յիշուին Սաղմանասար Բէ, Սարգոնի, և ուրիշ բազմաթիւ ասորեստանցի Թագաւորաց սեպաձեւ արձանագրութեանց մէջ¹: Միևի կամ Միևիի առջեւ դնելով Կար (Kar) մասնիկը, որ խամիտերէնի մէջ՝ տեղ կամ բնակարան կը նշանակէ, կ'ոչնենանք Կար-

միևիա, որուն կոնորդային առաջին տառը ինկնալով, Արմիևիա կամ Արմեևիա անունը կ'ոչնենանք:

Հայաստանի ազգագրական կարեւորութիւնն կախումն ունի իրեն աշխարհագրական դիրքէն, որ իրեն լեռներով և գետերով կը յառաջէ և կը ձգուի Հնդկոթեան ամենէն աւելի նշանաւոր և միանգամայն զանազան երկրներուն և ժողովուրդներուն մէջ: Ամենահին պատմական շրջաններուն՝ եղած է նա կելորոն մը, ուսկից սլսբը կամ անցեր են ամենէն աւելի կարեւոր զալթականութիւնը ժողովրդաց. որովհետեւ Հայ աշխարհի բարձրատափն արեւմուտքէն կը տարածուի՝ Մեղա, Ալիս, Իոնիս, Գալլ (Լիւկոս) և Ապար գետերու աղբիւրներէն մինչեւ Եւրասիայ, Կուրի և Արփա—Սուր աղբիւրները՝ դէպ ի հիւսիս և յարեւել, և հարաւահողմը՝ մինչեւ Եփրատայ ակունքը: Այս զանազան և իրարու հակառակ կէտերէն երթալով կը ցածնայ բարձրատափն դէպ ի Եւքսինեան և Կասպից ծովերը, մինչդեռ հարաւակողմը՝ վեր կը բռնեն զայն Տարբուս, Անտիտարբուս, Նպատ և Մասիս լեռները: Ստրաբոն Հետեւեալ կերպով կը սահմանէ զՄեծ—Հայս. արեւելքէն՝ Մեծ Մարք և Ատրպատական. հիւսիսէն՝ Կովկաս, կամ Վրաստան և Ալուանք. արեւմուտքէն՝ Փոքր—Հայք կամ Պարսպոտան լեռներ, Պոնտոսի քանի մի ազգերն և Եփրատ²: Պտղոմէոս աշխարհագիրն և Պլինիոս իրարու հետ կը համաձայնին, բայց երկուքն ալ կը տարբերին Ստրաբոնէն³: Ստրաբոնի յիշած վեց գետերէն՝ երկուքը, Գալլ (Լիւկոս) և Փասիս, կը թափին ի Պոնտոս. երկուքը՝ Կուր և Եւրասիս՝ կը թափին Կասպից ծովը. և միւս երկուքն՝ Տիգրիս և Եփրատ՝ Պարսկական ծոցը:

Այսպէս հարեւանցի յիշատակելն վերջը Հայաստանի սահմանները, լեռները և գետերը, դիւրաւ կ'ըմբռնուի թէ ամենահին ժամանակներէն սկսեալ, երկրին խիտա կլիման պէտք էր ստիպել զՀայս՝ որ երթան ուրիշ

1. Schrader, *The Cuneif. Inscript. and the Old Testament*, vol. II, էջ 118.

2. Strab. XI, XIV.

3. Plin. H. N, Lib. VI. c. XXIV.

աւելի բարեխառն կլիմայով երկիրներ փըն-տոնն, և զերադասին դաշտավայրերը և ընդարձակ հովիտները՝ քան իրենց ցուրտ բարձրատափերը և ձիւնապատ լեռները։ Հաւանական է՝ թէ լեռանց ճիւղաւորման և գեւեղութեան ընթացքին հետեւելով՝ իշան գիրաւ Միւլագետաց հոլտին մէջ և Պոնտոսի ափունքը, ուսկից ոմանք զնացին ի փոքր Հայս, ի Կապադովկիա և Կիլիկիա, իսկ այլք՝ հիւսիսային փոքր Ասիա։

Այս տեղ կրնայ հարցունիլ թէ արդեօք Նոյ և իրեն երեք որդիքը, ջրհեղեղէն վերջը, կեցան Այրարատ աշխարհին մէջ, որու լեռներուն վրայ կանգ առաւ տապանն, երբ անձրեւները դադրեցան և ջրերը ցածցան, թէ իշան ղէպ ի Միւլագետք։ Այս վերջինը կ'ենթադրենք, նկատելով թէ գրեթէ անկաւրելի էր բնակել այն բարձրութեանց վրայ, ուր ներկայապէս ալ այնչափ օստոսիկ է ցուրտն, եւս աւելի անտանելի պիտի ըլլար այն՝ ջրհեղեղէն անմիջապէս վերջը։ Անտաբակոյս, ցրտութեան և ձնանց հետ, կը պակսէին անոնց նաեւ կենաց անհրաժեշտ կարուոր իրերը։ Միւս կողմանէ կը հաստատեն մեզ հին աւանդութիւնք, թէ նախ քան Բաբելոնի աշտարակաշինութիւնն և ազգաց մինչեւ այն ժամանակ անբնակ և ամայի երկիրներուն մէջ ցրուիլը, առաջին նահապետին (Նոյի) բազմութիւն թողունք և սերունդք ժողովեցան Սինարի լայնածաւալ դաշտերուն մէջ։ Նոյնչափ հաւանական է զարձեւալ, թէ երբ սկսան գաղթել ազգերն՝ անոնց առաջին բնակավայրերէն մին եղաւ Հայաստան, ուր բարձրացան մի և նոյն ճանապարհով՝ որով իշեր էին Նոյ և իրեն որդիքն, այն է՝ Եփրատ գետին ընթացքով։ Մարդկութեան երկրորդ նախահօր հրաշալի ազատութեան կենդանի յիշատակներն, և ջրհեղեղէն շատ զարեւր վերջը՝ այն երկիրներուն ըստ ամենայնի բարեբաղած վիճակն, և ուրիշ երկիրներու մէջ աւելի բաւազոյն բնակավայրեր գտնելու անստուգութիւնն՝ համոզեցին շատերը որ այն տեղ երթան հաստատելու իրենց բնակութիւնը։ Եւ երբ գնացին հոն, պարարտ արօտներու առատութիւնն՝ որ մինչեւ ցարդ կը տեսնուի նոյն իսկ ձմեռնային եղանակին

մէջ, ընտիր ձիւրու ցեղերն, ոսկւոյ հանքերն՝ զորս կը յիշատակեն հինք և որոնք հիմակ չեն գտնուիր, արծաթի և երկաթի հանքերն՝ որոնք կան տակաւին, և վերջապէս վաճառականութեան դիրութիւնն մերձակայ ազգաց հետ գետներուն միջոցով, այս բոլորը բուռն կերպով հրապուրեցին զանոնք, որով այն տեղ զրին իրենց հաստատուն բնակութիւնը։ Եւ մենք այն կարծիքն ունինք, թէ բազմութիւն ցեղեր այդ ամենահին Հայերուն, որոնք չափազանց կերպով բազմացան և մետաղներու բրածոյից և աշխատելու արուեստին մէջ շատ հմուտ էին, իրենց երկրէն աւելի գեղեցիկ և բարեխառն կլիմայով երկրներ տեսնելու և իրենց բնակութիւնը փոխելու բնական փափաքէն մղուած, գնացին ղէպ ի Կապարի և Սին ծովերուն մերձակայ գաւառները, ղէպ ի Կապադովկիա և հիւսիսային փոքր Ասիա, ուր հանքեր կը գտնէին աշխատելու համար։ Կողբիսացիք, Խաղտիք, Պոնտոսի և փոքր Ասիոյ բոլոր բնակիչք, որոնք երկաթագործութեան արուեստով կը պարագլէին, գտան այն տեղերուն մէջ նախկին Հայերը, ինչպէս կը կարծենք, որոնք գաղթած էին իրենց մայր Հայրենիքէն։ Նոյնպէս հաւանական է թէ ձին՝ առաջին տնգամ Հայաստանէն մտաւ փոքր Ասիոյ մէջ, և անկից յեգիպտոս՝ Նովի թագաւորաց ձեռքով. որովհետեւ Հիւքսոսներու ամեն գաշնակցութեան մասնակից էին նաեւ Պոնտոսի և փոքր Ասիոյ ժողովուրդները։

Դառնալով արդ Հայոց անուան և այն աւանդական զրուցին՝ իբր թէ Արմէնք կը չուած ըլլան Յասոնի ընկեր թեսաղացի Արմենաէն, կը կրկնենք թէ Հայոց նախկին անունն էր՝ Միւնի կամ Միւնի. հետեւաբար Արմէնիա անունն թեսաղացի Արմենոսէն յառաջ չեկաւ, որովհետեւ նոյն երկրի բնակիչք՝ Միւնացիք՝ ժամանակաւ շատ յատուկ Միւնիացիք, որոնք Պեղապետաց չափ ամենահին ժողովուրդ մ'են, անոնց մէկ ճիւղը և մերձաւոր ազգակիցք այն Միւնացի ժողովրդոց, որոնք գատուելով Հայաստանի իրենց եղբայրներէն՝ գնացին նորանոր աշխարհներ և հանքեր փնտռելու։ Իրենց գաղ-

Թականութեանց ընթացքին մէջ՝ այս ցեղե-
րէն մին, աւելի հարուստ եւ աւելի յանդուգն
բլլալով, կրցաւ մինչեւ Թեսաղիոյ մէջ մտնել
եւ Մինիա կոչուած քաղաքը հիմնել, որուն
համար կ'ըսէ Ստեփանոս Բիւզանդացի՝ թէ
յառաջն 'Αλμωνία կը կոչուէր։ Դինգորֆ
կ'ընթեանու զայն 'Αλμενία. Ահաւասիկ Ստե-
փանոսի խօսքն. Μινύα, πόλις Θετταλίας ή
πρότερον 'Αλμωνία, άφ' ής ή Μινύα άπό
Μινύου κληθεῖσα¹. Դ. Հոյտսնիս կը հա-
մարի թէ պէտք է կարդալ πόλις Μακε-
δονίας, որովհետեւ Ստեփանոս ուրիշ տեղ
մը Մակեդոնիոյ մէջ կը գնէ 'Α' μωνία քա-
ղաքը²։ Μινύα անուամբ ուրիշ քաղաք մ'ալ
կը գտնուի Փոնդիոյ մէջ՝ Լիւդիոյ սահմա-
նադուիւր³. Μινύα ազգանունն շատ ընդար-
ձակ կերպով յատկացուած կը տեսնենք Յու-
նաստանի եւ Փոքր Ասիոյ մէջ ամենաշին
ազգերու եւ տեղեացւոյ Որովհետեւ Մինիացի
կը կոչուին այն Եւպոյացիք, որոնք Մինիասի
ժամանակ՝ Թեսաղիայէն անցան ի Բելոդ-
սիա եւ հոն հիմնեցին Մինիացոց հզօր թա-
գաւորութիւնը, որուն մայրաքաղաքն էր Ու-
քսմենոս՝ որ Միհիակահ կը կոչուի այս
պատճառաւ, (Ορχόμενος Μινύεος, յորմէ քա-
ղաքացիքն կոչուեցան Μινύα Ορχομενίοι⁴.
Լիւիոյ մէջ Միլիացոց անունն, Μιλύα,
ոմանց կարծեօք, խանգարում մ'է Μινύα
անունն⁵։ Ի Տրիփիլիա, ի Լեմնոս եւ ի
Թեբրա⁶, ամենաշին ժամանակաց մէջ, կը
գտնենք զՄինիացիս։

Շարայարեւի

1. *Thes ling. graec.* հ. այլ. էջ 1076.
2. L. Holst. *Notae et Castigat. in Steph. Byz.* էջ 210. հ. այլ. Μινύα.
3. Steph. Byz. ա'դ.
4. Herodot. I, 146. Paus. II, 29, 3. IV, 27, 10.
5. Eustath. *Comm. in Hom.*, 635, 39. Plut. *Quaest. graec.* 46.
6. Herodot. IV, 145. Strab. VIII, 337, 347. Paus. VII, 2, 2.

ՀԱՅՏԴԵՍ ՀԱՆՐԱՊԵՏ

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ԹԵՐԹԵՐ

ՆՈՐ-ԿԵԱՆՔ Ե՛ Լ'ARMÉNIE. — Մի քանի
ամիս առաջ՝ Նոր-կեանք վերջացուց իւր ըն-
տիր ու հետաքրքրական յօդուածներէն մին՝
« Հոյտստան եւ Կ. Պօլիս » վերնագրով, որ մի
քանի ամիս տեւեց եւ բաւական երկար էր.
նոյն յօդուածին վրայ մենք փութացնէք ժա-
մանակին համառօտ տեղեկութիւն մը տալ։
Լ'Arménie-ի վերջին պրակին (Նոյեմբեր 1)
մէջ կը տեսնենք քննադատութիւն մը մի եւ
նոյն յօդուածի մասին. ու Պ. Մինասի քն-
նադատութիւնը մեզ յիշել կու տայ Քրիստոս-
նէութեան Ս. Հեղինակին արդարացի առանձն
թէ. « Տուք զկայսերն կայսեր եւ զԱստուծոյն Աս-
տուծոյ »։ Պօլսոյ կրթական հետզոյ՛ Հայաս-
տանի դատաւերու մէջ մտաց լոյս սփռելու
ծառայութեան պատիւը, երկու անձանի հրա-
պարակաբօսներն Արփիար ու Մինաս կ'ու-
զեն իրարմէ կորզել. խնդիրը քաղաքական
նիւթոց հետ կապակցութիւն չունենալով,
կարելի է տարբարուծել երկու յարգ. խմբա-
գիւրներու իրթական զործունէութեան պա-
տիւր, առ այս, կը սպասենք Պ. Մինասի յօ-
դուածին վերջաւորութեան։ Այս խնդրոյ զու-
գահաւասար հետաքրքրական էին նաեւ « Ա-
նահատի » մէջ երեւցած Պատարանատու-
ութիւն եւ անոր քննադատութիւնն. զոր նմա-
նապէս հրատարակեց Պ. Մինաս իւր Թերթին
մէջ. Բազմակիւր՝ Տարտանելիի ներդուցէն ան-
դին կարող չէ թրթուացնել ասոնց արձա-
գանգը։

ԶԱՅՆ ՀԱՅՐԵՆԵԱՏ. — Նիւ-Խորքի շա-
րթական ազգային լրագիրը իւր վերջին
պրակին (Թիւ 9) մէջ, երկար քննադատական
յօդուած մը հրատարակած է. յօդուածա-
գիրն Վ. Շահէնի, որ ծանօթ է իւր ընտիր
երկերով, կ'ը շատագոյ՛ Հայկական դարու-
թիւնը. ու իւր այդ յօդուածի գրութեան
շարժառիթ կ'ըլլայ Աստրաղրութեամբ յօ-
դուածագրի մը ոչ խօսքերն թէ.

« Մեր գրականութիւնը Յուճարեմէ, Լաւի-
ճերեմէ եւ Պարակիրեմէ գողցուած է ».

Օգտուած, թէ գողցուած։

Et voilà justement comme on écrit
l'histoire !

